# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1008-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՕԳՈՍՏՈՍ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 0987-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով. ***որոշում եմ***

Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 16 օգոստոս 2024 թվականի N 0987-Ա որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 օգոստոսի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1009-Ա

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Փամբակ համայնքի ավագանու 05 դեկտեմբերի 2023 թվականի N 135-Ն որոշմամբ. ***որոշում եմ***

1.«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ-ին տալ շինարարության թույլտվություն ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք, գ. Բազում, 5-րդ փողոց, 71/1 հասցեում, Ղարիբ Սուքիասյանին պատկանող տարածքի 0,4 կՎտ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 օգոստոսի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1010-Ա

## ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով. ***որոշում եմ***

1.Համայնքի ղեկավարի 15 օգոստոսի 2024 թվականի N 0980-Ա որոշման 4-րդ կետի մեջ կատարել հետևյալ փոփոխությունը «2020թ-ից հետո կառուցված» բառակապակցությունը փոխարինել «2020թ-ին կառուցված» բառակապակցությամբ:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

22 օգոստոսի 2024
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

### Ո Ր Ո Շ Ու Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1011-Ա

### ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Սամվել Ավագի Դերձյանի դիմումը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991 թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ. ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0295-0018 կադաստրային ծածկագրով 0,327761 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, գործառնական նշանակության հողամասի չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

ա)Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սամվել Ավագի Դերձյան (ծնված՝ 12.08.1963թ.), Գոհար Ղազարի Դերձյան (ծնված՝ 14.08.1965թ), Սևակ Սամվելի Զոհրանյան (ծնված՝ 18.12.1985թ.), Սյուզաննա Սամվելի Զոհրանյան (ծնված՝ 30.01.1987թ) և Նարեկ Սամվելի Պետրոսյան (ծնված՝ 24.05.1991թ.) համատեղ սեփականության իրավունքը 06-070-0295-0018 կադաստրային ծածկագրով 0,327761 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

2.Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0354-0071 կադաստրային ծածկագրով 0,319055 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

ա)Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Սամվել Ավագի Դերձյան (ծնված՝ 12.08.1963թ.), Գոհար Ղազարի Դերձյան (ծնված՝ 14.08.1965թ), Սևակ Սամվելի Զոհրանյան (ծնված՝ 18.12.1985թ.) Սյուզաննա Սամվելի Զոհրանյան (ծնված՝

30.01.1987թ) և Նարեկ Սամվելի Պետրոսյան (ծնված՝ 24.05.1991թ.) համատեղ սեփականության իրավունքը 06-070-0354-0071 կադաստրային ծածկագրով 0,319055 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, խոտհարք գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

23 օգոստոսի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1012-Ա

## ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ, 8-րդ և 16-րդ կետերով, հաշվի առնելով Ռուբեն Նորայրի Խառատյանի դիմումը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մարգահովիտ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 03.04.1991թ-ի թիվ 02 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ. ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Մարգահովիտ գյուղի վարչական տարածքում գտնվող 06-070-0357-0005 կադաստրային ծածկագրով 0,2478 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի չափերը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

ա)Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Ռուբեն Նորայրի Խառատյանի (ծնված՝ 31.08.1970 թ.) սեփականության իրավունքը 06-070-0357-0005 կադաստրային ծածկագրով 0,2478 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասի նկատմամբ:

2.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

23 օգոստոսի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1013-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 16 ՕԳՈՍՏՈՍ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 0987-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով 1749169 համրի վկայականը, հաշվի առնելով Կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանքը, այն մասին որ 1749169 համարի վկայականով պետական գրանցում ստացած հողամասի ճշտված ծածկագիրը 06-019-0064-0022 է. ***որոշում եմ***

1.Ուժը կորցրած ճանաչել 1749169 համարի վկայականի գրանցված իրավունքի սուբյեկտին նույնականացնելու նպատակով տրված 09.08.2024թ-ի հողհատկացման քաղվածքը և հիմք ընդունել 23.08.2024թ-ին տրված ճշտված քաղցածքը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

23 օգոստոսի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1014-Ա

## ՀՈՂԱՄԱՍԸ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հարություն Սուրենի Աբրահամյանի (ծնված 14/11/1964թ.) դիմումը, հիմք ընդունելով «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, ինչպես նաև սեփականության վկայականը՝ N 10042024-06-0009՝ ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գտնվող 06-102-0040-0007 կադաստրային ծածկագրով 3,2082 հա բնակավայրերի նպատակային նշանակության, այլ գործառնական նշանակության հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Փամբակ համյանքի Վահագնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող գտնվող 06-102-0040-0007 կադաստրային ծածկագրով առանձնեցված 3,2802 հա բնակավայրերի, այլ գործառնական նշանակության հողամասը տարանջատել երկու գույքային միավորների՝ 3,05203 հա մակերեսով հողամասի և 0,22817 հա մակերեսով հողամասի համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծերի:

ա)Տարանջատումից առաջացող 3,05203 հա մակերեսով հողամասին տրամադրել Փամբակ համայնք, Վահագնաձոր, 1-ին փողոց, 42 հողամաս փոստային հասցե:

բ)Տարանջատումից առաջացող 0.22817 հա մակերեսով հողամասին տրամադրել Փամբակ համայնք, Վահագնաձոր, 1-ին փողոց, 42/1 հողամաս փոստային հասցե:

3.Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանում, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համյանքի անվամբ պետական գրանցում կատարելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

23 օգոստոսի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1015-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 29 հուլիս 2024 թվականի թիվ 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 29 Հուլիս 2024 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Սայադ Արամայիսի Խաչատրյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 2. 06-070-0336-0048 ծածկագրով 0,70129 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 5-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 5250 ՀՀ դրամով:

2.Սայադ Արամայիսի Խաչատրյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Սայադ Արամայիսի Խաչատրյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

26 օգոստոսի 2024
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1016-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 29 հուլիս 2024 թվականի թիվ 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 29 Հուլիս 2024 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Սայադ Արամայիսի Խաչատրյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 3. 06-070-0336-0049 ծածկագրով 0,75582 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 6300 ՀՀ դրամով:

2.Սայադ Արամայիսի Խաչատրյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Սայադ Արամայիսի Խաչատրյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

26 օգոստոսի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1017-Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 76-րդ, 77-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով՝ հիմք ընդունելով Փամբակ համայնքի հողամասը վարձակալության տրամադրելու մասին 23 հոկտեմբեր 2023 թվականի թիվ 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքում 23 հոկտեմբեր 2023 թվականին անցկացված վարձակալության մրցույթում հաղթող ճանաչված Սայադ Արամայիսի Խաչատրյանին վարձակալությամբ 25 տարի ժամկետով տրամադրել լոտ 1. 06-070-0336-0050 ծածկագրով 1,31948 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, 4-րդ կարգի խոտհարք գործառնական նշանակության հողամաս, մրցույթում առաջարկված առավելագույն գնով՝ տարեկան 10500 ՀՀ դրամով:

2.Սայադ Արամայիսի Խաչատրյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Սայադ Արամայիսի Խաչատրյանի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

26 օգոստոսի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1018-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏԱԿ ՌՈՒԲԵՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի ա. և բ. ենթակետով, համաձայն Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 135-Ն որոշման հավելվածի տեղական տուրքեր բաժնի 9-րդ մասի 1-ին կետի ա. ենթակետի և 2-րդ կետի ա. ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արտակ Ռուբենի Գևորգյանի 2024 թվականի օգոստոսի 20-ի հայտը՝ ***որոշում եմ***

1.Անհատ ձեռնարկատեր Արտակ Գևորգյանի /ՀՎՀՀ 67103221/ հայտը բավարարել և նրան տալ Փամբակ համայնքի Անտառամուտ բնակավայրի 1 փողոց, տ 6/1 հասցեում (25 քմ մակերեսով հիմնական շինությունում) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2024 թվականի II և III եռամսյակների (01.04.2024թ-01.10.2024թ) համար:

2.Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված ատուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

26 օգոստոսի 2024
գ. Փամբակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1019-Ա

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով Փամբակ համայնքի ավագանու 14 նոյեմբերի 2023 թվականի «Փամբակ համայնքի ավագանու 14 ապրիլի 2023 թվականի թիվ 08-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Փամբակ համայնքի սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 129-Ն և 06 ապրիլի 2022 թվականի «Լոռու մարզի Փամբակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 32-Ա որոշումները՝ ***որոշում եմ.***

1.Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու նպատակով ստեղծել մշտական հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Նախագահ՝ Սամսոն Ոլխանյան /համայնքի ղեկավարի խորհրդական/

Նախագահի տեղակալ՝ Սամվել Անանյան /համայնքի ղեկավարի տեղակալ/

Քարտուղար՝ Նարեկ Ժամհարյան /սոցիալական աշխատող/

Անդամներ՝ Ռաիսա Մինասյան /Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար/

Գրիգոր Կարապետյան /Փամբակ համայնքի ավագանու անդամ/

Շուշանիկ Հակոբյան /Փամբակ համայնքի ավագանու անդամ/

Անուշ Սարգսյան /Դեբեդ բնակավայրի վարչական ղեկավար/

Արշակ Ռամազյան /Ձորագյուղ բնակավայրի վարչական ղեկավար/

Սարգիս Հակոբյան /«Փամբակ կոմունալ» ՀՈԱԿ-ի տնօրեն/

Կիմա Շերմազանյան /Ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ/

Աստղիկ Օհանյան /Իրավաբ., քարտուղ., անձն. կառ. և ծրագրերի բաժնի առաջին կարգի մասնագետ/

2.Հաստատել Փամբակ համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

3.Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ղեկավարի 29 փետրվարի 2024 թվականի N 0253-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

26 օգոստոսի 2024
գ. Փամբակ

Հավելված
Փամբակ համայնքի ղեկավարի
26 օգոստոսի 2024 թվականի թիվ 1019-Ա որոշման

# ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
# ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրման գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովն /այսուհետ՝ հանձնաժողով/ ստեղծվում է համայնքի ղեկավարի կողմից:
2. Հանձնաժողովի կանոնակարգի նպատակն է արդյունավետ դարձնել Հանձնաժողովի աշխատանքները և կանոնակարգել Հանձնաժողովի աշխատանքներին վերաբերող հարցերը:
3. Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է և գործում է հասարակական սկզբունքով:
4. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Աջակցության մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչներով, սույն կանոնադրությամբ:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել՝
   - Համայնքի ավագանու մինչև երեք անդամ
   - Համայնքային ոչ առևտրական կազմակերպության մինչև երկու անդամ
   - Սոցիալական աշխատող
   - Համայնքապետարանի աշխատակազմից մինչև երեք անդամ
   - Քաղաքացիական հասարակության մինչև երեք ներկայացուցիչ /ցանկությամբ/
2. Հանձնաժողովի անհատական կազմից համայնքի ղեկավարն ընտրում է Հանձնաժողովի նախագահ, տեղակալ և քարտուղար:
3. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է ռոտացիոն կարգով՝ նշանակվելու պահից մեկ տարի ժամկետով:
4. Հանձնաժողովի քարտուղար նշանակվում է համայնքի սոցիալական աշխատողը:
5. Հանձնաժողովը ենթակա է լուծարման, եթե Հանձնոժողովի կազմից հեռացվել կամ իրենց լիազորությունները վայր են դրել անդամների կեսից ավելին:
6. Հանձնաժողովի լուծարման դեպքում համայնքի ղեկավարի կողմից ստեղծվում է նոր հանձնաժողով՝ նոր անհատական կազմով:
7. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են, եթե վերջինս չի մասնակցել կես տարվա ընթացքում կայացված նիստերի կեսից ավելիին:

8. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են քննարկումների միջոցով՝ առնվազն ամիսը մեկ անգամ, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ և կազմվում եզրակացություններ:
9. Հրատապ լուծումներ պահանջող խնդիրների դեպքում Հանձնաժողովի արտահերթ նիստ կարող է գումարվել Հանձնաժողովի նախագահի կամ քարտուղարի նախաձեռնությամբ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

10. Հանձնաժողովի նիստերն իրականացվում են Հանձնաժողովի հաստատած օրակագով: Հանձնաժողովի նախագահը որոշում է նիստի անցկացման օրը և ժամը:
11. Հանձնաժողովի օրակարգում նշվում են՝
- Հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և ժամը,
- Քննարկման ենթակա հարցերը,
- Քննարկվող հարցը զեկուցողի անունը և ազգանունը:
12. Հանձնաժողովի նիստերի իրականացման կազմակերպչական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:

## IV.ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ և ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

13. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է Հանձնաժողովի քարտուղարը:
14. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են Հանձնաժողովի անհատական կազմի կեսից ավելին:
15. Նիստի արձանագրության մեջ նշվում են.
    - Նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու ժամանակը,
    - Նիստի օրակարգը,
    - Նիստին մասնակցող, հրավիրված անձանց անունները,
    - Նիստի ընթացքը, հանձաժողովի իրավական և փաստական հիմնավորումերը,
    - Ընդունված որոշումները:
16. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը եռօրյա ժամկետում ստորագրում են Հանձնաժողովի անդամները:
17. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են համայնքապետարանի աշխատակազմում:

## IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

18. Սոցիալական աջակցությունից օգտվելու նպատակով համայնքի ղեկավարին կարող են դիմել.
    - Համայնքի բնակիչները, ովքեր հաշվառված են կամ վերջին 2 տարում փաստացի բնակվում են համայնքում,

- Արցախի Հանրապետությունից տեղահանվածները, ովքեր փաստացի բնակվում են համայնքում:

19. Դիմումը **/Տես՝ Ձև 1/** ներկայացվում է համայնքապետարանի աշխատակազմ անձամբ կամ լիազորված անձի միջոցով /լիազորագիրը կցվում է դիմումին/:
20. Դիմումին կցվում են ծառայության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը /**Տես՝ Ձև 2**/:
21. Էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված դիմումները հնարավոր է ուղարկել նաև համայնքապետարանի պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով:
22. Փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի համապատասխան ներկայացուցիչը տրամադրում է հանձնաժողովի քարտուղարին, ով իր հերթին դրանք ներկայացնում է հանձնաժողովի նախնական քննարկման:
23. Հանձնաժողովը իրականացնում է տնային այցելություն և կազմում դիմումատուի կարիքների գնահատման ակտ:
24. Հրավիրվում է հանձնաժողովի նիստ, որին կարող է մասնակցել նաև դիմումատուն:
25. Հանձնաժողովի տված եզրակացության հիման վրա համայնք ղեկավարի կողմից կայացվում է սոցիալական աջակցություն տրամադրելու որոշում կամ գրավոր մերժվում է սոցիալական աջակցության ծառայության տրամադրումը:
26. Համայնքում սոցիալական աջակցության տրամադրման յուրաքանչյուր գործընթաց իրականացվում է վարչարարության հիունքների և վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարչական վարույթի շրջանակներում:
27. Սոցիալական աջակցություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում և դրանց վերաբերյալ որոշումները ընդունվում են 30 օրվա ընթացքում:

## V.ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

24. Տունայց կատարելու նպատակով Հանձնաժողովը ձևավորում է աշխատանքային խումբ և կազմում ժամանակացույց, որից հետո իրականացվում է դիմումատուի ընտանիքի կենսապայմանների ուսումնասիրություն, կատարվում է ընտանիքի կարիքների գնահատում և լրացվում գնահատման թերթիկը /**Տես՝ Ձև 3**/:

25. Անհրաժեշտության դեպքում կարող է իրականացվել կրկնակի այցելություն:

26. Ուսումնասիրության ժամանակ մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է հրավիրել համապատասխան մասնագետների /բժիշկ, հոգեբան և այլն/:

27. Լրացված գնահատման թերթիկները քննարկվում են Հանձնաժողովի նիստում:

28. Քննարկման արդյունքների հիման վրա Հանձնաժողովը կազմում է արձանագրություն, որն ստորագրում են նիստի ներկա Հանձնաժողովի անդամները:

29. Հանձնաժողովի նախագահը եզրակացությունը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աջակցություն ցուցաբերելու վերջնական որոշում կայացնելու համար:

30.Համայնքի ղեկավարը որոշումը կայացնում է եզրակացությունը ստանալու օրվանից հետո երկօրյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում:

31. Հրատապ լուծում պահանջող և անհապաղ աջակցության անհրաժեշտության վերաբերյալ դիմումների քննարկումն իրականացվում է արագընթաց ընթացակարգով՝ սոցիալական աշխատողի և Հանձնաժողովի 2 անդամների հատուկ եզրակացության հիման վրա, Հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, համայնքի ղեկավարի անմիջական հսկողությամբ և անհապաղ որոշումների կայացման միջոցով:

## VI. ԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՏՐՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

32. Հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն տրման համար հաշվի են առնվում.

- Կարիքի գնահատման արդյունքում սոցիալական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ նվազագույն շեմը հատելը /4 միավոր/,
- Սոցիալապես անապահով ընտանիքի կողմից համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունների բարեխիղճ կատարումը և սոցիալական օգնության տրամադրման դիմումի ներկայացման ժամանակ տեղական հարկերի, տուրքերի, վարձավճարների պարտք չունենալը.
- համայնքի ղեկավարի, ավագանու անդամի, համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպության աշխատակից հանդիսացող անձանց հետ համատեղ տնտեսություն չվարելը:
- նույն ընտանիքին միևնույն տարվա ընթացքում սոցիալական աջակցություն կարող է տրամադրվել առավելագույնը 2 անգամ, որտեղ 2-րդ անգամ տրամադրվող աջակցությունը չի կարող գերազացել առավելագույն սահմանաչափի 1,5-պատիկի չափը:
- սոցիալական աջակցության առավելագույն սահմանաչափը կազմում է 50,000 դրամ:

33. Ընտանիքի կարիքների գնահատումն իրականացվում է համաձայն **հավելված 4-ի**:

## VII.ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Հանձնաժողովի նախագահը.

- Նախագահում է Հանձնաժողովի նիստերը,
- Հաստատում է Հանձնաժողովի օրակարգն ու ստորագրում Հանձնաժողովի ընդունած արձանագրություններն ու որոշումները,
- Լսում է Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և անհրաժեշտության դեպքում տալիս ցուցումներ և հանձնարարականներ,

35.Հանձնաժողովի անդամը.

- Մասնակցում է Հանձնաժողովի նիստերին,
- Ներկայացնում է հարցեր հանձնաժողովի նիստերում ընդգրկելու համար,

- Հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի մասին ներկայացնում է բանավոր կամ գրավոր կարծիք,
- Մասնակցում է որոշումների ընդունման համար քվեարկությանը,
- Ծանոթանում է Հանձնաժողովի նիստերի արձանագրություններին,

36. Հանձնաժողովի քարտուղարը.

- Ապահովում է Հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգների, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանց տրամադրումը Հանձնաժողովի անդամներին,
- Հանձնաժողովի անդամներին իրազեկում է Հանձնաժողովի նիստերի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին,
- Կազմում է Հանձնաժողովի արձանագրությունները և եզրակացությունները, ստորագրում դրանք:

**Ձև 1**

<u>Դիմումի ձև</u>

**ՀՀ..........................................մարզի**

**.......................................համայնքի**

**ղեկավար......................................ին**

**Հասցե..........................................**

**..........................................բնակիչ**

**Անուն, ազգանուն...............................**

**..................................................ից**

**Հեռախոս........................................**

**Էլ. փոստ.........................................**

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին**

Հանդիսանում եմ ................. համայնքի բնակիչ: Գտնվում եմ սոցիալական ծանր պայմաններում, կյանքի դժվարին իրավիճակում:

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

.......................................................................................................................................

**Ձև 2**

**Դիմումին կցվող փաստաթղթերի ցանկ**

| № | **Փաստաթղթի անվանումը** | **Կցված է** (կատարվում է✓ նշում) |
|---|---|---|
| 1. | Դիմում՝ լրացված սահմանված ձևով | |
| 2. | Անձը հավաստող փաստաթղթի պատճենը | |
| 3. | Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը | |
| 4. | Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին | |
| 5. | Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննականորոշման պատճենը | |
| 6. | Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք | |
| 7. | Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից | |
| 8. | Այլ | |

*Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման համար:*

*Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:*

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

□էլեկտրոնային փոստի միջոցով

□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով

□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ ----------------- ----------------------------------
(ստորագրություն) (դիմումատուի անունն, ազգանուն)

----- ------------- 20-- թ.

***Ձև 3***

**ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ**

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք**

**« » 20 թ.**

**Ընդհանուր տվյալներ**

**Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն՝**

**Հասցե՝**

**Հեռախոս՝**

**Ընտանիքի ժողովրդագրական տվյալները**

| Անուն, ազգանուն, հայրանուն | Կարգավիճակ | Ծննդյան օր, ամիս, տարի |
|---|---|---|
| | | |

**Ընտանիքի իրավիճակը**

| Իրավիճակ | Նկարագիր |
|---|---|
| Բնակարանային պայմաններ | |
| Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ | |
| Աշխատանքով ապահովվածություն | |
| Եկամուտներ | |
| Հագուստով ապահովվածություն | |
| Սննդով ապահովվածություն | |
| Առողջապահական կարիքներ | |
| Այլ | |

**Ընտանիքի սոցիալական կապերը**

| Հարազատներ, ընկերներ, ծանոթներ, հասարակական կազմակերպություններ, համայնք | |
|---|---|
| տվյալներ | կարգավիճակ |
| | |
| | |

**Լրացուցիչ տեղեկատվություն**

**Մասնագետի դիտարկումներ**

**Աշխատանքային խմբի անդամների ստորագրությունները**

## Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

| N | Չափորոշիչը | Չափորոշիչի համար սահմանված միավորը | Ընտանիքի ստացած միավորը |
|---|---|---|---|
| 1 | Նպաստառու ընտանիք | 1 | |
| 2 | Միայնակ մայր | 1 | |
| 3 | Ամուսնալուծված ծնողի խնամքին գտնվող երեխա | 1 | |
| 4 | Բազմազավակ ՝<br>չորս, հինգ անչափահաս երեխա ունեցող ընտանիք<br>վեց և ավելի անչափահաս երեխա ունեցող) ընտանիք | 1<br><br>2 | |
| 5 | Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին) | 2 | |
| 6 | 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող ընտանիք | 2 | |
| 7 | Հաշմանդամ երեխաի ընտանիք | 2 | |
| 8 | Տնակ կացարանու կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք | 2 | |
| 9 | Վարձով բնակվող ընտանիք | 1 | |
| 10 | Դժբախտ պատահար կամ արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետից տուժած) ընտանիք | 3 | |
| 11 | Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք | 2 | |
| 12 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) անձի ընտանիք | 3 | |
| 13 | Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք | 2 | |
| 14 | Միայնակ չաշխատող թոշակառու | 2 | |
| 15 | Միակողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք | 2 | |
| 16 | Կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում բնակվող անչափահաս երեխա ունեցող ընտանիք | 3 | |
| 17 | Մինչև 23 տարեկան ուսանող ունեցող ընտանիք՝ | 2 | |
| 18 | Երկողմանի ծնողազուրկի (ԱԾԽՄ) երեխա ունեցող ընտանիք | 3 | |
| 19 | Խնամակալ՝ (անգործունակ ճանաչված անձի և անչափահասի) ունեցող ընտանիք | 3 | |
| 20 | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնվծ ( | 4 | |

| | | | |
|---|---|---|---|
| | անհետաձգելի բժշկական միջամտություն, վիրահատություններ, այլ բժշկական կենտրոն տեղափոխելու անհրաժեշտություն և այլն) անձի ընտանիք | | |
| 21 | Այլ անբարենպաստ պայմաններ | 1-4 | |
| | Ընդամենը | | |
| | | | |

Աշխատանքային խմբի անդամների ստորագրությունները

______________________________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1020-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-065-0021-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Ձորագետ, 1-ին փողոց, 37 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

26 օգոստոսի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1021-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ,ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Մաքսիմ Միկինյանի (ծնված՝ 05.01.1964թ.) դիմումը, Լեռնապատ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.03.1991թ N-2 որոշումից քաղվածքը, այն հանգամանքը, որ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ. ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-041-0146-0011 կադաստրային ծածկագրով 0,16375 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Մաքսիմ Տաճատի Միկինյան (ծնվ. 05.04.1941 թ.), Մելանյա Սամսոնի Հովսեփյան (ծնվ. 01.01.1948 թ.), Արփիկ Մաքսիմի Միկինյան (ծնվ. 17.02.1971 թ.), Աննա Մաքսիմի Միկինյան (ծնվ. 05.10.1972 թ.) և Տաթևիկ Մաքսիմի Միկինյան (ծնվ. 12.01.1976 թ.) սեփականության իրավունքը 06-041-0146-0011 կադաստրային ծածկագրով 0,16375 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա գտնվող 170,5 ք/մ ընդհանուր մակերեսով, մինչև 2001թ-ը կառուցված շինությունների նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս.ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

27 օգոստոսի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1022-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-041-0146-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Լեռնապատ 21-րդ փողոց, 7 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

27 օգոստոսի 2024
գ. Փամբակ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1023-Ա

## ՀՈՂԱՄԱՍԻ,ՆՐԱ ՎՐԱ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Վերա Քամալյանի (ծնված՝ 24.07.1940 թ.) դիմումը, Լեռնապատ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.03.1991թ. N-2 որոշումից քաղվածքը, ժառանգության իրավունքի վկայագիրը՝ ժառանգական գործ 290/22, այն հանգամանքը, որ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն հանդիսանում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ. ***որոշում եմ***

1.Հաստատել Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-041-0146-0005 կադաստրային ծածկագրով 0,13674 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Վերա Կարապետի Քամալյան (ծնվ. 24.07.1940 թ.) և Նորայր Սամվելի Քամալյան (ծնվ. 10.09.1970 թ.) բաժնային սեփականության իրավունքը 06-041-0146-0005 կադաստրային ծածկագրով 0,13674 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա գտնվող 192,4 ք/մ ընդհանուր մակերեսով, մինչև 2001թ-ը կառուցված շինությունների նկատմամբ:

3.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

27 օգոստոսի 2024
գ. Փամբակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1024-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով՝ ***որոշում եմ***

1.Փամբակ համայնքի վարչական տարածքում գտնվող 06-041-046-0005 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել Փամբակ համայնք, գյուղ Լեռնապատ, 21-րդ փողոց, 15 բնակելի տուն փոստային հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ**

27 օգոստոսի 2024
գ. Փամբակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Փամբակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Փամբակ, +374 98393131, info@pambak.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվականի N 1025-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ 50-Ն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ կառավարության 29 ապրիլի 2021 թ N 698-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով «Գուգարաց աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, Իգոր Քոչինյանի Ներսիսյանի դիմումը, Վահագնի գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 13.05.1991թ N-04 որոշումից ճշտված քաղվածքը, այն հանգամանքը, որ հողամասն ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ՝ որոշում եմ

1. Հաստատել Փամբակ համայնքի Լեռնապատ գյուղի վարչական սահմաններում գտնվող 06-103-0072-0001 կադաստրային ծածկագրով 0,13452 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և հողամասի վրա առկա շինությունների չափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել Իգոր Սեդրակի Քոչինյանի (ծնված՝ 02/10/13939թ.) սեփականության իրավունքը 06-103-0072-0001 կադաստրային ծածկագրով 0,13452 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և մինչև 2001թ կառուցված ընդհանուր 112,1 ք/մ շինությունների նկատմամբ:

3. Անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք, գ. Վահագնի, 1-ին փողոց, 21 բնակելի տուն փոստային հասցե:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

27 օգոստոսի 2024, գ. Փամբակ